

ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկե Ժողովրդապետութիւններու

3 յունիս 2018

ԺԷ. Տարի

Թիւ 23

ՏՕՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ԺԱՄԱՄՈՒՏ

Խաղաղութիւնդ շնորհէ՛ սուրբ Եկեղեցւոյդ, Տէ՛ր, խաղաղութիւնդ եւ անպարտելիութիւնդ՝ թշնամիներու յարձակումներէն. եւ մէ՛կ հաւատքի մէջ ամրացո՛ւր Կաթողիկե Եկեղեցիդ. քեզ կը դաւանինք իբր մեր Տէրն ու Աստուածը, փրկե՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԴԿ. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Որ անբաւ յաղթական զօրութեամբ Թագաւոր ես երկինքի ու երկրի, Զրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ Հօր փառակից ըլլալով՝ օրհնուած եւ անմահներէն եւ խոնարհելով մարմին առիւր, Քրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ մեծ զօրութեամբ մահը ոտնակոխ ըրիւր եւ յարութիւն առնելով լուսաւորեցիւր սուրբ Եկեղեցին, անմահ Էութիւն, կ'օրհնաբանենք քեզ:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 117, 23, 1)

Տերը ճիշդ այս օրը ընտրեց, եկէ՛ք, ցնծանք եւ մասնաւորապէս այսօր ուրախանանք:


Տերը օրհնեցէ՛ք, որովհետեւ բարի է Ան եւ իր ողորմութիւնը՝ յաւիտենական է:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՒՏԵԸ

**Երբայեցիներուն Թուղթէն է ընթերցուածը.
(Եբր. 9, 1-10)**

Առաջին ուխտն ալ ուներ պաշտամունքային կանոններ, ինչպէս նաեւ երկրաւոր տաճար մը: Առաջին խորանը շինուեցաւ այսպէս եւ կոչուեցաւ Սրբութիւն եւ հոն դրուած էին աշտանակը, սեղանը եւ առաջաւորութեան հացը: Յետոյ, երկրորդ վարագոյրին ետեւ, կար ուրիշ խորան մը, որ կը կոչուէր Սրբութիւն Սրբութեանց, ուր կը գտնուէին ոսկիէ բուրվառը, ուխտի տապանակը, ոսկիով պատուած ներսէն եւ դուրսէն եւ որուն մէջ գետեղուած էին՝ ոսկիէ անօթ մը լի մանանայով, Ահարոնի գաւազանը, որ ծաղկեցաւ եւ ուխտի տախտակները, եւ անոր վերեւ՝ փառքի սերովքները, որոնք իրենց թելերով հովանի կ'ընէին քաւութեան խորանին վրայ: Ժամանակը չէ այժմ մանրամասն խօսիլ այս բոլորին մասին: Ամէն բան այսպէս դասաւորուած ըլլալով՝ քահանաները ամէն ատեն կը մտնէին առաջին խորանը՝ պաշտամունքի արարողութիւն կատարելու: Իսկ երկրորդ խորանը, միայն քահանայապետը կը մտնէր եւ տարին մէկ անգամ, հետը տանելով արիւն, զոր կը մատուցանէր՝ իր եւ ժողովուրդին մեղքերուն համար:

Այսպէս, Սուրբ Հոգին մեզի ցոյց կու տայ, թէ Տաճարին մուտքը փակ կը մնայ,



ցորքան կանգուն է առաջին խորանը. ասիկա պատկերն է ներկայ ժամանակին. թեպէտ զոհեր եւ պատարագներ կը մատուցուին, սակայն ասոնք անկարող են մատուցողը անոր խղճմտանքի մէջ կատարեալ ընելու: Ասոնք արտաքին կարգադրութիւններ են. կը հային կերակուրներու, ըմպելիներու, լուացումներու, որոնք ի զօրու են մինչեւ վերանորոգումի ժամանակը:

Ալէլուիա, Ալէլուիա,

Տէ՛ր, Քու տունիդ մէջ ապրելու ո՞վ արժանի պիտի ըլլայ, Քու սուրբ լերանդ վրայ ո՞վ բնակելու իրաւունք պիտի ունենայ:

(Սղմ. 14, 1)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ ՅԻՍՈՒՄ՝ ՈՐՂԻ ԱՍՏՈՒԾՈՅ

(Յովհ. 10, 22-30)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս, մինչ, Երուսաղէմի մէջ, նաւակատիքի տօնը կը կատարուէր եւ ձմեռ էր, կը շրջէր Տաճարին Սողոմոնի սրահին մէջ: Հրեաները շուրջը հաւաքուեցան ու ըսին. «Մինչեւ ե՞րբ մեր սիրտը պիտի մաշեցնես, եթէ դուն ես Քրիստոսը՝ ըսե՛ մեզի յայտնապէս»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ըսի ձեզի, բայց դուք չէք հաւատար: Գործերը, զորս կ'ընեսմ Հօրս անունով, կը վկայեն ինծի, սակայն դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: Ոչխարներս կը լսեն ձայնս, ես կը ճանչնամ զանոնք եւ անոնք կը հետեւին ինծի, ես կու տամ անոնց յաւիտենական կեանքը, անոնք երբեք պիտի չկորսուին, եւ ոչ ոք կրնայ զանոնք իմ ձեռքերէս յափշտակել: Հայրս, որ ինծի տուաւ զանոնք, բոլորէն մեծ է, եւ ոչ ոք կարող է Հօրս ձեռքէն բան մը յափշտակել. Հայրը եւ ես մէկ ենք»:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Յիսուս Որդի Աստուծոյ

«Ես կու տամ անոնց յաւիտենական կեանքը, անոնք երբեք պիտի չկորսուին, եւ ոչ ոք կրնայ զանոնք իմ ձեռքէս յափշտակել»: Այսպէս խոստացաւ Յիսուս իրեն հետեւողներուն: Ուստի, Տէրը կը հոգայ ու կը պահպանէ իր ժողովուրդը, իր ընտրեալները, իր եկե-

ղեցին: Չի թողուր զանոնք իրենց ճակատագրին, այլ՝ կ'ազատէ ստրկութենէն ու անոնց կը վերադարձնէ իրենց կորսնցուցած ազատութիւնը: Բարի հովիւներ կը դրկէ զիրենք առաջնորդելու դէպի հայրենական տաքուկ տունը: Ան կը ճանչնայ իր ոչխարները եւ կը



հետապնդէ զանոնք, կը սպասէ անոնց վերադառնալը, ուսերուն վրայ շալկելով՝ կը գուրգուրայ եւ կը խնամէ առանց կշտամբելու: Ան ոչխարներուն կու տայ իր կեանքը:

Աստուած՝ հայրական փրկչական Սիրոյ ծրագրին մէջ մեզի շնորհեց իր միածին Որդին եւ մեզ՝ Որդւոյն: Այս սերէն մղուած, Յիսուս ինքզինք անվերապահօրէն տուաւ, որպէս լրում Երկնաւոր Հօր փրկչագործութեան ծրագրին: Ան իր կեանքը Ս. Հաղորդութեան, Հացի եւ Գինիի կերպարանքին տակ, կը փոխանցէ եկեղեցւոյ հաւատացեալներուն, որպէսզի անոնք հոգեւոր սնունդ առնեն եւ առատ կեանք մը ունենան: Այս կեանքով պիտի մասնակցին յաւիտենական Բահանային

փրկչական քահանայութեան՝ պարուրելով Նախնական շնորհքի կեանքին, շարունակելով աստուածային սիրոյ ծրագիրը եւ փրկելով մարդկութիւնը մեղքի ստրկութենէն:

Հետեւաբար, անհրաժեշտ է, որ բոլորս ապրինք, գործենք, պտղաբերենք ու սրբանանք Ամենասուրբ Հաղորդութենէն, որ «հորհուրդն է բարեպաշտութեան, նշանն է միութեան եւ զօրն է սիրոյ» (Ս. Օգոստինոս) :

Յիսուս մեզ կը հրաւիրէ շարունակելու փրկչագործութեան ծրագիրը: Անվերապահօրէն անսասնք Ասոր հրաւերին, մեր վստահութիւնն ու յոյսը դնելով մեր երկնային մօր՝ Մարիամ աստուծամօր: Ամեն: